ԱԶՆԻՎ ՏԻԿՆԱՅՔ, ՋԱՀԵԼ ՀՅՈՒՐԵՐ

Ազնիվ տիկնայք, ջահել հյուրեր.
Շատ չեն կյանքում այսպես օրեր...
Եվ, միշտ այսպես, երբ որ լինի,
Նըստեք ուրախ մի սեղանի,
Ողջ մոռացած – սիրտ ու հոգի
Նըվիրեցեք տաղ ու երգի.
Բարձր երգեք խընդում ու սեր.
Շատ չեն լինում ուրախ օրեր:
Ահա լեռներ, կանաչ անտառ,
Գետի կարկաչ, երկինք պայծառ,
Եվ բաժակներս լի-փըրփըրուն,
Ինչպես այս մեր սրտերն եռուն,
Որ աշխուժով թըռչում են վեր.
Շատ չեն լինում այսպես ժամեր:
Բայց այստեղից, մեր սիրելի
Հալեյ, Քյարամ, Աբգար-օղլի,
Ուր ուզենաք դուք արշավել,
Ձը մոռանաք հեք Ուրավել,
Եվ այս հարկը, այ իգիթներ,
Շատ չեն լինում այսպես տըներ: